ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ
ԱՆԴԱՄ ՊԱՐՈՆ ՄԱՐԿՈՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Հարությունյան,

Ի պատասխան Ձեր 16.09.2021թ. հ.178 գրության, տեղեկացվում է.

Աջափնյակ վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի առևտրի, ծառայությունների և գովազդի բաժնի աշխատակիցները կատարել են ուսումնասիրություն և Աշտարակի խճուղի թիվ 7/2 հասցեում գործող «Սան-Մարկո» սրճարանի տնօրենին զգուշացրել, որպեսզի օբյեկտում հնչեցվող երաժշտության ձայնի աղմուկի մակարդակը պահպանի նորմայի սահմաններում՝ չխանգարելով հարակից տների բնակիչների հանգիստը:

Միաժամանակ տեղեկացվում է, որ ժամը 23.00-ից հետո լռությունը կամ գիշերային անդորրը խախտելու վերաբերյալ փաստն արձանագրելու համար բնակիչները կարող են դիմել ՀՀ ոստիկանություն:

Աջափնյակ վարչական շրջանի Աշտարակի խճուղի հ.7/2 հասցեում առևտրային գործունեության իրականացման ընթացքում հնչող բարձր երաժշտության հետ առաջացած խնդիրը ենթակա է կարգավորման Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից տրված համապատասխան մասնագիտական եզրակացության հիման վրա՝

Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կողմից:

Տեղեկացվում է, որ Աշտարակի խճուղի հ.7/2 հասցեում գտնվող «Սան-Մարկո» բացօթյա լողավազան-ռեստորանից եկող ձայնի աղմուկի վերաբերյալ գործիքային չափումներ իրականացնելու համար Աջափնյակ վարչական շրջանի ղեկավարի կողմից 30.08.2021թ. հ.28/Կ-3632 գրություն է ուղարկվել ՀՀ առողջապահության և աշխատանքի տեսչական մարմին:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ